ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 36. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1 Քոչվոր արաբները՝ ***բեդվինները,*** պահում էին ուղտեր, ոչխարներ և ձիեր: Ուղտը բեդվինի դաժան կյանքի անբաժան ուղեկիցն էր: Նոր վայր քոչելիս ուղտը՝ «անապատի նավը», իր վրա տեղափոխում էր բեդվինի ողջ ունեցվածքը: Բեդվիններն ապրում էին տոհմական կարգով: Ցեղապետերը ղեկավարում էին համայնքի կյանքը, դատում ցեղակիցներին, պաշտպանում քոչատեղերը այլ ցեղերի հարձակումներից: Արաբները հեթանոս էին, ամեն ցեղ պաշտում էր իր աստվածների կուռքերին:

2 Միավորված արաբական ցեղերը հզոր ռազմական ուժ էին ներկայացնում: Ձորքի հիմքը նիզակներով, նետ ու աղեղներով զինված հեծելազորն էր: Այն փոթորկի նման հարձակվում էր թշնամու վրա, իսկ անհաջողության դեպքում՝ արագորեն խուսափում հետապնդումից:

3 Խալիֆայության կազմի մեջ էին մտնում զարգացած մշակույթ ունեցող բազում երկրներ՝ Եգիպտոսը, Սիրիան, Միջագետքը, Միջին Ասիան, Հայաստանը և այլն: Արաբները կարողացան յուրացնել, զարգացնել և տարածել այդ ժողովուրդների գիտատեխնիկական նվաճումները: Մինչ այդ միայն որոշ երկրներում հայտնի բրնձի, արմավի, ձիթապտղի, բամբակի, նարնջի, կիտրոնի, շաքարեղեգի և այլ կուլտուրաների մշակումը արաբները տարածեցին խալիֆայության բոլոր երկրներում: Արաբ ջուլհակները բամբակից ու բրդից պատրաստում էին թեթև և ամուր գործվածքներ: Հռչակված էին Իրանի գորգերը: Դամասկոսի պողպատից պատրաստված սրերը, դաշույնները և զրահները բարձր էին գնահատվում բոլոր երկրներում:

Արաբ վաճառականները աշխույժ առևտուր էին անում Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Չինաստանից բերում էին մետաքս և ճենապակյա ամանեղեն, Հնդկաստանից՝ գործվածքներ, համեմունքներ և թանկարժեք քարեր:

Տնտեսության վերելքը մեծապես նպաստում էր գիտության և մշակույթի զարգացմանը: Խալիֆայությունում, խոշոր քաղաքներում հիմնվում էին բարձրագույն դպրոցներ, զարգանում էին գիտական ուսումնասիրությունները: Բաղդադում ստեղծվեց հին հույն գիտնականների ձեռագրերի գրադարան և թարգմանարան: ***Արաբերենը դարձավ գիտության և գրականության լեզու:***

Արաբ մաթեմատիկոսները ստեղծեցին ***հանրահաշիվը,*** ծանոթ էին հնդիկ աստղագետների և մաթեմատիկոսների աշխատություններին: Նրանք սկսեցին օգտագործել ***հնդիկների ստեղծած թվանշանները***, իսկ եվրոպացիներին դրանք անցան որպես ***արաբական թվանշաններ:***

Դամասկոսում, Բաղդադում և Սամարղանդում կառուցվեցին ***աստղադիտարաններ:*** Աստղագետները հատուկ գործիքներով կարողացան հաշվարկել երկրագնդի մոտավոր չափերը, նկարագրեցին տեսանելի աստղերի դիրքը երկնքում: Միջինասիացի գիտնական ***Ալ-Բիրունին*** հանձարեղ ենթադրություն արեց, որ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը:

Արաբ ***աշխարհագրագետները*** և ճանապարհորդները մանրամասն նկարագրեցին խալիֆայության երկրները, Հնդկաստանը, Չինաստանը, թափանցեցին Աֆրիկայի և Արևելյան Եվրոպայի խորքերը, կազմեցին հայտնի երկրների ու ծովերի քարտեզները: Մեծ հաջողության հասավ ***բժշկությունը***: Միջին Ասիայում է գործել հռչակավոր բժիշկ ***Ավիցեննան (Իբն-Սինան)***: Իր աշխատությունում նա նկարագրել է շատ հիվանդությունների նախանշանները, որոնք մինչ այդ իրարից չէին տարբերում:

Դեռևս ***756 թ.*** Իսպանիայում անկախ պետություն էր դարձել ***Կորդովայի խալիֆայությունը***: X դ. Կորդովան, Գրանադան, Վալենսիան, Տոլեդոն, Սևիլիան և այլ քաղաքներ դարձան արհեստների, առևտրի և մշակույթի խոշոր կենտրոններ: Կորդովայում կային հարուստ գրադարաններ և 27 բարձրագույն դպրոց, այն ժամանակ, երբ Եվրոպայում դեռ համալսարաններ գոյություն չունեին: Շատ եվրոպացիներ բարձրագույն կրթություն ստանալու համար գալիս էին Իսպանիա՝ ուսանելու Կորդովայի խալիֆայության բարձրագույն դպրոցներում: Մինչև Վերածննդի դարաշրջանը, անտիկ հեղինակների աշխատություններին Եվրոպան ծանոթանում էր արաբերեն թարգմանությունների միջոցով:

Կորդովայի խալիֆայությունը կապող օղակ հանդիսացավ Արևմտյան Եվրոպայի և արաբական աշխարհի միջև: